ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մայիսի 2019 թվականի N 34

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի, Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 57 և N 61-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքի բյուջեի 4729՝ այլ նպաստներ բյուջեից, հոդվածից 100.0 /մեկ հարյուր հազար/ դրամ հատկացնել Արցախյան ազատամարտի մասնակիցներին և զոհվածների ընտանիքներին.
   1) Առուստամյան Անահիդ Ալեքսանդրի՝ 10.0 /տասը հազար/ դրամ.
   2) Աբելյան Մանուշակ Գևորգի՝ 10.0 /տասը հազար/ դրամ.
   3) Խաթայան Էլզուրա Աթանեսի՝ 10.0 /տասը հազար/ դրամ.
   4) Մնացականյան Ալվինա Հակոբի՝ 10.0 /տասը հազար/ դրամ.
   5) Ղազարյան Տարոն Ռազմիկի՝ 10.0 /տասը հազար/ դրամ.
   6) Ղազարյան Դարվին Ռազմիկի՝ 10.0 /տասը հազար/ դրամ.
   7) Չիլինգարյան Մեջլում Ալեքսանդրի՝ 10.0 /տասը հազար/ դրամ.
   8) Սահակյան Գրիշա Սերգեյի՝ 10.0 /տասը հազար/ դրամ.
   9) Ասատրյան Ժիրայր Գևորգի՝ 10.0 /տասը հազար/ դրամ.
   10) Վարդանյան Սերգեյ Վարազդատի՝ 10.0 /տասը հազար/ դրամ:
2. Համայնքի բյուջեի 4729՝ այլ նպաստներ բյուջեից, հոդվածից 30.0 /երեսուն հազար/ դրամ հատկացնել համայնքի բնակիչ Լևոն Ֆիրդուսի Սահակյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 թվականի մայիսի 6

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2019 թվականի N 35

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Սերոժ Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող 021-019 ծածկագրի (վկայական N 423671, 0.08 հա) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել 3 փողոց N 55 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2019 թվականի մայիսի 06

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2019 թվականի N 36

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման պահանջները, ինչպես նաև քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի), հողաշինարարի որակավորման վկայական (N 0345) ստացած անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը՝ ***որոշում եմ.***

1. Արամայիս Բաղդասարի Սարգսյանին և Քնարիկ Հայրիկի Նաջարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 0 փողոց N 16 հասցեում գտնվող 0.08 հա բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 114.15 քմ արտաքին մակերեսով շինությունները՝ 91.67 քմ արտաքին մակերեսով բնակելի տուն, 6.38 քմ արտաքին մակերեսով սանհանգույցը և 16.1 քմ արտաքին մակերեսով պարիսպը ճանաչել օրինական, քանի որ.
   1) դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
   2) դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 91.67 x 1300 ≈ 119180 /հարյուր տասնինը հազար հարյուր ութսուն/, 6.38 x 780 ≈ 4980 /չորս հազար ինը հարյուր ութսուն/, 16.1 x 780 ≈ 12560 /տասներկու հազար հինգ հարյուր վաթսուն/ (ընդամենը՝ 136720 /հարյուր երեսունվեց հազար յոթ հարյուր քսան/) դրամի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության ԱԳԿԿ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ նշված շինությունները գնահատելու և պետական գրանցման տալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 թվականի մայիսի 8
գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2019 թվականի N 37

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Սարգիս Սարիբեկյանին տալ հանրային սննդի օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն 2019 թվականի 2-րդ եռամսյակի՝ մայիսի 10-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 թվականի մայիսի 10

գ. Նոր Արտամետ